

«Գրիգորիա» բժշկա-հումանիտար քոլեջ

Հաստատված է
Տնօրինական խորհրդի նիստում
«29» 08 2019թ.
Արձանագրություն № 1.

Հաստատում եմ
«Գրիգորիա» բժշկա-հումանիտար քոլեջի
Տնօրեն՝ Ի. Վարդանյան
«02» 09 2019թ.



ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2019

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույնով սահմանվում է «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողներին հավելյալ օժանդակության և խրախուսման գործընթացի կազմակերպման կարգը:

1.2. Քոլեջի ուսանողներին խրախուսման գործընթացը իրականացվում է «ՀՀ կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, Քոլեջի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների և Ուսանողական խորհրդի կանոնադրության պահանջներին համապատասխան:

1.3. Ուսանողների խրախուսման գործընթացը կազմակերպվում է Ուսանողական և Մանկավարժական խորհուրդների երաշխավորությամբ քոլեջի տնօրենի կողմից:

1.4. Սույն կարգը սահմանում է ուսանողների խրախուսման ողջ գործընթացը, նրա կարգավորման ենթակա խնդիրները:

2. ՀԱՎԵԼՅԱԼ ՕԺԱՆԴԱԿՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

2.1. Ուսանողական խորհրդի հիմնական գործառույթներից է ուսանողներին օժանդակումը և ուղղորդումը:

2.2. Վարչական անձնակազմի կողմից ուսանողների օժանդակումը և ուղղորդումը վերաբերում է կրթական գործընթացին և ուսանողական կյանքին, մասնավորապես՝

ա) սոցիալական օժանդակում,

բ) նյութական օժանդակում,

գ) ուսումնական գործընթացներում խորհրդատվության տրամադրում և այլն:

2.2. Որոշումներ կայացնելու ժամանակ հաշվի է առնվում հետևյալ չափորոշիչները՝

❖ մասնակցել է ուսանողական տարբեր հասարակական միջոցառումներին,

❖ ցուցաբերել է ուսման բարձր առաջադիմություն,

❖ ընդգրկված է ուսումնական ծրագրերի վերանայման աշխատանքներում,

❖ մասնակցել է ամբիոնային ուսումնական գործընթացների բարելավմանը,

❖ ակտիվ մասնակցում է ամբիոնային հետազոտական աշխատանքներին,

❖ նախաձեռնում և մասնակցում է Քոլեջի հասարակական կյանքին և կազմակերպչական գործունեությանը,

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

3.1. Բոլոր ուսանողներին հնարավորություն է տրվում մասանակցելու Քոլեջում կազմակերպվող տարբեր միջոցառումներին:

3.2. Հնարավորություն է ընձեռվում ընդգրկվելու ուսումնական ծրագրերի վերանայման աշխատանքներում:

3.4. Համաձայն Քոլեջի ներքին կարգապահական կանոնների պահպանման, պարտականությունների բարեխիղճ և օրինակելի կատարման, ուսման մեջ բարձր առաջադիմություն ցուցաբերելու, անբասիր աշխատանքի, նորամուծությունների և այլ ձեռքբերումների համար կարող է խրախուսվել հետևյալ կարգով՝

- ա) ուսման վարձի մասնակի փոխհատուցում (զեղճ) 10-20%-ի չափով,
- բ) շնորհակալագրի տրամադրում, կցված անձնական գործերին,
- գ) միանվագ դրամական կամ հուշանվերներով պարգևատրում,
- դ) արտոնյալ ուսման վարձաչափի զեղճի տրամադրում:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգի ընդունումը և նրանում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները կատարվում են Քոլեջի Տնօրինական խորհրդի որոշմամբ: